ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն/
Հայաստանի Սոցիալական Նեդրումների Հիմնադրամ

Ծրագրի անվանումը: <u>Համայնքների և համայնքների խմբերի/տարածքների զարգացման ներուժի գնահատման և դասակարգման մեթոդաբանության մշակում:</u>

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ <u>SDC-02</u>

Հայաստանի սոցիալական նեդրումների հիմնադրամ (ՀՍՆՀ) ստացել է դրամաշնորհ Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալությունից (ՇԶՀԳ) և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ Համայնքների և համայնքների խմբերի/տարածքների զարգացման ներուժի գնահատման և դասակարգման մեթոդաբանության մշակման համար:

Առաջադրանքի նպատակը. Անհրաժեշտ է բարելավել, զարգացնել և ընդլայնել ՀՍՆՀ-ի կողմից ներկայումս օգտագործվող շահառուների/ համայնքների դասակարգման մեթոդաբանությունը, ինչը կծառայի նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մշակված ''Գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների ամփոփ գնահատման մեթոդաբանության'' լրամշակմանն ու բարելավմանը:

Խորհրդատուն պետք է՝

ա) մշակի համայնքների և համայնքների խմբերի/տարածքների զարգացման ներուժի և աճի բևեռ դառնալու հնարավորությունների գնահատման մեթոդաբանություն

բ) մշակի գործիքամիջոց, որը հնարավորություն կտա դասակարգել ՀՍՆՀ-ի շահառուներին (համայնքները և համայնքների խմբերը/տարածքները) ըստ զարգացման ներուժի:

Առաջադրանքի տևողությունը 110 օր:

Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

Ընտրության չափանիշներն են.

- ☐ Ընդհանուր փորձառություն / կատարված աշխատանքների ցանկ և համառոտ նկարագրություն,
- ☐ Քանակական և որակական հետազոտությունների իրականացման ինչպես նաև մեթոդների և մեթոդաբանությունների մշակման փորձ վերջին 10 տարիների ընթացքում, ուղղված տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման կամ հանրային կառավարման զարգացմանը,
- ☐ Հեռավոր շրջաններում աշխատելու փորձ:

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ 'Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011' ('Խորհրդատուների Ուղեցույցներ' (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011)), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers (January,2011) 3.7 կետում սահմանված 'Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն' ընթացակարգին համաձայն:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՍՆՀ գրասենյակից Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Ձեռքբերումների բաժին, աշխատանքային օրերին ժ. 10:00-ից մինչև ժ.17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան 2014 թ. սեպտեմբերի 5-ը, ժամը 17:00-ը:

Հայասանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ

Ձեռքբերումների բաժին

Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ

Էլ-փոստ՝ asif@armeniasif.am

Հեռ: (+37410) 24 71 42